Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  N 2

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/22 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ «06» հուլիսի 2022թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Հովհաննիսյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Պատվիրատուն՝ Ջրվեժի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/22» ծածկագրով Ջրվեժ համայնքի կարիքների համար պոմպի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով ընթացակարգի բացման և գնահատման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/22 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցման հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլ.փոստ |
|---|---|---|
| 1 | «ՎԱԼՄԼ» ՍՊԸ | ք.Արմավիր, Շահումյան փ., 13/1<br>հեռ. 093 99 00 11<br>vagarshak75@mail.ru |
| 2 | «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ | Արմավիրի մարզ, ք.Արմավիր Սայաթ-Նովա 5ա/13<br>հեռ. 096 11 20 10<br>Hidromashservice@mail.ru |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը.

Համապատասխանում են՝ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի և «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են .

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը (ՀՀ դրամով) | | | Գնման գին |
|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ-ն | Առաջարկված ընդհանուր գինը | |
| 1 | «ՎԱԼՄԼ» ՍՊԸ | 2 190 000 | 0 | 2 190 000 | 2 200 000 |
| 2 | «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ | 1 630 000 | 0 | 1 630 000 | |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/22 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների ներկայացված փաստաթղթերի փաթեթների վերաբերյալ.

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի և «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, հանձնարարում է հանձնաժողովի քարտուղար Ա.Պետրոսյանին բավարար գնահատված բոլոր մասնակիցներին՝ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին և «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ին միաժամանակ էլեկտրոնային ձևով ծանուցել հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի, տևողության և պայմանների մասին՝ գների նվազեցման նպատակով, որը տեղի կունենա 2022 թվականի հուլիսի 8-ին, ժամը 15:30-ին, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գյուղ Ջրվեժ Մելքոնյան 76, բանակցությունների տևողությունը՝ 15:30-ից 15:45, յուրաքանչյուր հաջորդող գնային առաջարկ ներկայացնել ոչ ավելի քան 2 րոպեի ընթացում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան

Անդամներ՝ Ս.Հովհաննիսյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան